ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/45570-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (ԽՍ-265-02.09.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1353 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Խ-265-02.09.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (Խ-265-02.09.2019-ՊԻ-011/0) (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում տարբերակել գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու կամ վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու ժամկետները:

Նախագծով առաջարկվող կարգավորումն ընդունելի է, սակայն ունենք հետևյալ դիտարկումները.

1. Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի գործող կարգավորումները գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների մասով որոշակի խնդիրներ են առաջացնում պրակտիկայում, մասնավորապես, մատնանշվում են այն իրավիճակները, երբ անձը պահվում է կալանքի տակ՝ չնայած նրան, որ քրեադատավարական կառուցակարգերում սահմանված՝ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու առավելագույն ժամկետները սպառվել են: Այսինքն՝ խոսքը գնում է անձի ազատությունը սահմանափակող՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի մասին: Համամիտ լինելով նախագծի հեղինակների կողմից մեջ բերված հիմնավորումների հետ՝ այնուամենայնիվ, գտնում ենք, որ նախագծում համապատասխան դատավարական ժամկետներն անհրաժեշտ է վերանայել միայն անձի ազատությունը սահմանափակող՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի մասով, իսկ մնացած դատական ակտերի մասով թողնել անփոփոխ: Այսպիսի մոտեցումը կլուծի քրեական վարույթի շրջանակներում ծագող խնդիրները, ինչպես նաև չի հանգեցնի դատարանների ծանրաբեռնվածության աճին:

2. Նախագծով չի կարգավորվում այն հարցը, թե ինչ ժամկետներ պետք է կիրառվեն այն վճռաբեկ բողոքների նկատմամբ, որոնք ներկայացված կլինեն վճռաբեկ

դատարան մինչև նախագծի ուժի մեջ մտնելը, սակայն վճռաբեկ դատարանի կողմից դեռևս քննարկված չեն լինի, ուստի առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ. «2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վճռաբեկ դատարան մուտքագրված վճռաբեկ բողոքների վրա:»:

3. Նախագծի 1-ին հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքում առկա թերությունները նշելու պահանջը պետք է տարածվի ինչպես գործն ըստ էության լուծող, այնպես էլ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վրա: Հակառակ դեպքում կստացվի, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեպքում վճռաբեկ դատարանը կարող է որոշում կայացնել վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին՝ չնշելով առկա թերությունները, ինչն անընդունելի ենք համարում:

4. Նախագծի դրույթների համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին, որոնց համաձայն՝ օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Հոդվածում ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետով:

Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 սեպտեմբերի 2019 թվականի N 1353 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Վարդապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Խ-265-02.09.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 24
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-265-02.09.2019-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության 1998 թվականի հուլիսի 01-ի օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք») 414^1 -ին հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.
«Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝
- գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեպքում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում,
- գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնհինգ օրվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները:»:

Հոդված 2. Օրենսգրքի 414^2 -րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.
«5. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝
- գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեպքում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում,
- գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու օրվանից մեկ ամսվա ընթացքում:»:

Հոդված 3. Օրենսգրքի 414^3 -րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.
«3. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝
- գործն ըստ էության լուծող դատական դատական ակտերի դեպքում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից երեք ամսվա ընթացքում,
- գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ «Օրենսգիրք») 414^1 -ին, 414^2 -րդ եւ 414^3 -րդ հոդվածները կարգավորում են վճռաբեկ բողոքը վերադարձնելու, առանց քննության թողնելու, վարույթ ընդունելու, վարույթ ընդունելը մերժելու հետ կապված իրավահարաբերությունները:

Մասնավորապես 414^1 -ին հոդվածի 3-րդ, 414^2 -րդ հոդվածի 5-րդ եւ 414^3 -րդ հոդվածի 3-րդ մասերը կարգավորում են այն դատավարական ժամկետները, որոնց ընթացքում վճռաբեկ դատարանը կայացնում է համապատասխան որոշումները:

Օրենսգիրքը չի առանձնացնում գործն ըստ էության լուծող եւ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի մասով տարբերակված ժամկետներ:

Այստեղ հատկանշական է նաեւ, որ Օրենսգիրքը տարբերակում է դատավարության մասնակիցների կողմից՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեպքում՝ մեկամսյա եւ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում՝ տասնհինգօրյա ժամկետներ:

Կարգավորման ներդաշնակությունն ապահավելու համար՝ անհրաժեշտ է, որպեսզի վճռաբեկ բողոքի քննության այս ենթափուլում նույնպես տարբերակվեն գործն ըստ էության լուծող եւ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու կամ վարույթ ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու ժամկետները:

Գործող կարգավորումը գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքների մասով կարող է որոշակի խնդիրներ առաջացնել: Այսպես՝ Օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քրեական գործով մինչդատական վարույթում կալանքի տակ պահելու ժամկետը չի կարող լինել 2 ամսից ավելի, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Ընդ որում, գումարվում են կալանքի տակ եւ բժշկական հաստատությունում անձի գտնվելու, մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետի մեջ հաշվակցվող բոլոր ժամկետները: Մինչդեռ, կալանավորման (կալանքի ժամկետի երկարացման) մասին դատական ակտի դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթը ընդունելու կամ վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում կայացնելու համար նախատեսվում է եռամսյա ժամկետ:

Այսպիսով՝ տվյալ պարագայում վճռաբեկ բողոքարկումը չի կարող դիտվել դատավարության մասնակիցների համար իրենց իրավունքների դատական պաշտպանության արդյունավետ միջոց, ինչը հակասության մեջ է մտնում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի հետ: